ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով, սույն թվականի դեկտեմբերի 12-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պատվիրակությունը, որը Սովետական Միություն էր ժամանել Ռուսաց Պատրիարքարանի հրավերով:

Պատվիրակության կազմի մեջ մտնում էին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. Վիլյամ Վիսսերտ դր Հուֆտը՝ իբրև պատվիրակության ղեկավար, Արևելյան Ասիայի քրիստոնյաների կոնֆեդերացիայի գործադիր քարտուղար Ջո Տանը, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղարի օգնական և Միջազգային հարցերի հանձնախմբի տնօրեն դոկտ. Օտտո Նոլդեն, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղարի օգնական և էկումենիկ գործունեության բաժնի տնօրեն, Անգլիկան Եկեղեցու քահանա Ֆրանսիս Հաուսը, էկումենիկ ինստիտուտի տնօրենի օգնական դոկտ. Նիկոս Նիսսիոտիսը:

Պատվիրակությանը ուղեկցում էին Մոսկվայի Ռուս Պրավոսլավ Եկեղեցու Պատրիարքարանի Արտաքին հարաբերությանց բաժնի նախագահի տեղակալ Տ. Նիկոդիմ վարդապետը և Լենինգրադի Հոգևոր ակադեմիայի դոցենտ Տ. Վիտալիյ քահանա Բորովոյը:

Նորին Ս. Օծությունը և Ս. Էջմիածնի միաբանությունը ջերմագին ընդունելություն ցույց տվին հյուրերին: Պատվիրակության անդամները դիտեցին Էջմիածնի արքավայրերը, ծանոթացան Երևանին, այցելեցին մայրաքաղաքի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցին, եղան Մատենադարանում:

Կիրակի, դեկտեմբերի 13-ին, հյուրերը ներկա եղան Մայր Տաճարի նորակառույց մարմարակերտ Ավագ Սեղանի օծման արարողությանը և հայրապետական սուրբ պատարագին: Սուրբ պատարագից հետո Վեհարանում տեղի ունեցավ ընդունելություն ի պատիվ մեծարգո հյուրերի:

Վեհափառ Հայրապետի ու Գերագույն Հոգևոր Խորհրդի և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պատվիրակության միջև, Վեհարանի դահլիճում, ջերմ մթնոլորտում տեղի ունեցավ մտքերի փոխանակություն Հայաստանյայց Ս. Եկեղեցու և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի փոխհարաբերությունների ու եղբայրական կապերի սերտացման վերաբերյալ:

Դեկտեմբերի 14-ի առավոտյան գերհարգելի հյուրերը մեկնեցին դեպի Մոսկվա:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

14 դեկտեմբերի 1959 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ